

ՓՈՒՆԸՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ
ՆԱՀԱՆՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՅ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կարելորդելով կրթական փոխանակման ծրագրերի դերը իրենց երկրների միջև,
ելնելով ԱՄՆ Կառավարության կողմից ֆինանսավորվող կրթական փոխանակման
ծրագրերին միջնակարգ դպրոցների աշակերտների եւ բարձրագույն ուսումնական
հաստատությունների ուսանողների մասնակցության անհրաժեշտությունից՝
Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ամերիկայի Միացյալ
Նահանգների Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,
պայմանավորվում են հետեւյալի մասին.

ՀՈՂՎԵՐԸ 1

Կողմերը պայմանավորվում են, սույն Փոխըմբռնման հուշագրին եւ իրենց
համապատասխան երկրների ազգային օրենսդրությանը համաձայն, ԱՄՆ Կառավարության
կողմից ֆինանսավորվող՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում իրականացվող կրթական
փոխանակման ծրագրերին (Փոխանակման ծրագրեր) մասնակից դարձնել Հայաստանի
Հանրապետության միջնակարգ դպրոցների եւ բարձրագույն ուսումնական
հաստատությունների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ ազգությամբ
հայ աշակերտներին եւ ուսանողներին:

Ծրագրերի մասնակիցները Փոխանակման ծրագրերի տեւողության ընթացքում
Ամերիկայի Միացյալ Նահանգներում ուսումը կշարունակեն տեղի կրթական
հաստատությունների այն դասարաններում/կուրսերում, որտեղ նրանք կսովորեին
Հայաստանի Հանրապետության համապատասխան կրթական հաստատություններում, եթե
մնային Հայաստանում:

ՀՈՂՎԵՐԸ 2

Ծրագրերի մասնակիցները Փոխանակման ծրագրերի տեւողության ընթացքում
Ամերիկայի Միացյալ Նահանգներում ուսումնառության ժամանակաշրջանում Հայաստանի
Հանրապետությունում պահպանում են իրենց՝ աշակերտի կամ ուսանողի կարգավիճակը՝
Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

ՀՈՂՎԵՐԸ 3

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները Ամերիկայի Միացյալ
Նահանգներից վերադառնալուց հետո շարունակում են իրենց կրթությունը իրենց
համապատասխան՝ հայկական բարձրագույն ուսումնական հաստատությունների այն
կուրսում, ուր նրանք փոխադրվել են Ամերիկայի Միացյալ Նահանգներում
ուսումնառությունն ավարտելուց հետո:

ՀՈՂՎԵՐԸ 4

Ծրագրերի մասնակիցներին/աշակերտներին հնարավորություն է տրվում Հայաստան
վերադառնալուց հետո հաջորդ դասարան/կուրս փոխադրվելու համար քննություն
հանձնել Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության
տիպային ուսումնական պլանով նախատեսված այն առարկաներից, որոնք Ամերիկայի
Միացյալ Նահանգներում սովորելիս չեն ուսումնասիրել, եւ, ի լրումն, ավարտական
դասարանի աշակերտներին հնարավորություն է տրվում հանձնել պետական ավարտական
քննություններ:

ՀՈՂՎԵՐԸ 5

Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ՝ Կողմերի համապատասխան ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերն ավարտելու մասին դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցելու օրվանից երեսուն (30) օր հետո:

Սույն Փոխըմբռնման հուշագրի ժամկետը լրանում է հինգ տարուց: Այն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ 5 տարվա համար, եթե Կողմերից որեւէ մեկը գործողության ժամկետի ավարտից առնվազն 6 ամիս առաջ մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով չձանուցի Զուշագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Երեւան քաղաքում 2006 թ. մարտի 3-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն եւ անգլերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. հունիսի 24-ից:

Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջեւ հայտագրերի փոխանակման միջոցով կնքված Համաձայնագիր ընդունող պետությունում պաշտոնական պարտականություններ կատարող ծառայողների խնամքի տակ գտնվող անձանց աշխատանքի իրավունքի մասին

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը իր խորին հարգանքն է հավաստում Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտին՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջեւ վերջերս կայացած քննարկումների հետ կապված՝ ընդունող պետությունում պաշտոնական պարտականություններ կատարող ծառայողների խնամքի տակ գտնվող անձանց աշխատանքի իրավունք ձեռք բերելու վերաբերյալ եւ պատիվ ունի հայտնելու, որ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության ցանկությամբ, ստորագրելու համապատասխան երկրների դիվանագիտական ներկայացուցչություններում, Զյուլպատոսական հիմնարկներում ծառայողների եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններում ծառայողների խնամքի տակ գտնվող անձանց աշխատանքի իրավունք ձեռք բերելու վերաբերյալ Համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը պատիվ ունի առաջարկելու սույն հայտագրին կից պայմանները:

Եթե սույն հայտագրին կից պայմանները ընդունելի են Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության համար, ապա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը պատիվ ունի առաջարկելու, որ սույն հայտագիրը եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության պատասխանը կազմեն Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջեւ, որն ուժի մեջ կմտնի Կողմերի՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իրավական ընթացակարգերն ավարտելու մասին միմյանց վերջին գրավոր ծանուցման օրվանից:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, օգտվելով առիթից, վերստին իր խորին հարգանքն է հավաստում Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտին:

Երեւան, 20-ը սեպտեմբերի, 2005

Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտ
Վաշինգտոն

MEMORANDUM OF UNDERSTANDING

Between the Government of the Republic of Armenia and the
Government of the United States of America on the Participation of

Armenian Students in U.S. Government Educational Exchange Programs

Recognizing the value of educational exchanges between their respective countries and

given the need for participation of students of secondary schools and institutions of higher education in the U.S. Government funded educational exchange programs,

the Government of the Republic of Armenia and the Government of the United States of America, hereafter to be referred to as "Parties"

have reached the following understandings:

Article 1

Pursuant to this Memorandum of Understanding and national legislation of their respective countries Parties agree to involve students of secondary schools and institutions of higher education of the Republic of Armenia, who are Armenian nationals - citizens of the Republic of Armenia, in the U.S. Government funded educational exchange programs ("Exchange Programs") conducted in the United States.

For the duration of the Exchange Programs, Participants should study at the U.S. educational institutions corresponding grades/years which conform with the grades/years of their respective Armenian educational institutions, had they continued studies in Armenia.

Article 2

Participants of Exchange Programs should remain in student status in the Republic of Armenia under Armenian law for the duration of the Exchange Program in the United States.

Article 3

Upon return from the U.S., students of higher education institutions should continue their education, at their respective Armenian universities, at the grade/year they were transferred to upon completion of their education in the U.S

Article 4

In order to move to the next grade/year or to graduate, participants/students from secondary schools should have the opportunity to take exams for that years credit at their Armenian secondary school for those subjects envisaged by the school curriculum that were not studied at the U.S. school and, in addition, final year students should have the opportunity to take official graduation exams at their Armenian school upon their return.

Article 5

This Memorandum of Understanding becomes effective on the 30th day following the notifications sent by Parties through diplomatic channels on the completion of the procedures required for approval of this Memorandum of Understanding by their respective national legislation.

This Memorandum of Understanding expires in five years. This Memorandum of Understanding shall be automatically renewed for another 5-year term,

should there be no notification received through diplomatic channels from either Party on its intention of termination at least 6 months prior to the expiry of this Memorandum of Understanding.

Signed at the city of Yerevan on this 3th day of March 2006, in two originals, in the Armenian and English languages, with both texts being equally authentic.

The Memorandum of Understanding has entered into force on 24.06.2006.